չուած է Դասխուրանցու երկում շուրջ 840 թ., իսկ Մեծարանից Ս. Յակոբավանքի մի արձանագրութեան մէջ՝ 853-ին, իբրեւ թէ կարող է նոյնացուել Շաքի-Հերէթի թագաւորութիւնը 890-ական թթ. հիմնադրած Համամ Բարեպաշտի հետ: Ժամանակային այսպիսի հեռաւորութիւնը եւ Սահլի՝ Առանշահիկից Բագրատունի դառնալու անհաւանականութիւնը նկատել է դեռ Բ. Ուլուբաբեանը (սակայն նա էլ առաջարկել է մէկ այլ՝ աղբիւրների վկայութիւններին հակասող վարկած՝ հնարաւոր համարելով Համամի հետ Սահլի թոռան՝ Գրիգոր Ատրներսեհեանի համադրումը): Փորձել են նաեւ ենթադրել, թէ Թովմայի ընագրի Ծաքէ-*ն հնարաւոր է նոյնացնել Կուրից հարաւ ընկած որեւէ տեղանուան հետ՝ Արցախում (Սլ. Սարգսեան), կամ անգամ՝ Սիւնիքում (Զ. Բունիաթով):*

Սակայն, մեր համոզմամբ, աղբիւրագիտական նիւթի ակնյայտ հակասականութեան այս խնդիրը կարող է հաւանական լուծում ստանալ լոկ այն դէպքում, եթէ ուղղակի ընդունենք, որ գործ ունենք Թովմա Արծրունու շարադրանքի բովում ի յայտ եկած, այսպէս կոչուած, «տեխնիկական» վրիպման հետ: Կարծում ենք, որ վասպուրականցի հեղինակի բանաւոր կամ գրաւոր աղբիւրն իրականում յիշատակել է հէնց «Խաչէնոյ *տէր» Սահլին (գրաւոր աղբիւրի տարբերակում ենթադրելի է նաեւ գաւառանուան շատ կամ քիչ աղճատուած լինելու հնարաւորութիւնը): Սակայն միջնադարեան պատմիչն, ըստ ամենայնի, իրեն անծանօթ այդ տեղանունը փոխարինել է՝ բնականաբար, ոչ շատ լաւ, բայց գոնէ ինչ-որ տեղից ծանօթ անուամբ՝* «Ծաքեոյ *տէր»: Յիշենք, որ* Խաչէն *գաւառանունը դեռեւս ծանօթ չէ նաեւ Արծրունեաց տան պատմիչի ժամանակակից Յովհաննէս Դրասխանակերտցին, որը յիշատակում է լոկ* Խաչէն *ամրոցը*[23]*: Փաստօրէն, կենտրոնական Հայաստանի մատենագիրներից առաջինն Անանիա Մոկացին է, որ վկայում է այդ անունով մարզի մասին, ուր ինքն այցելել էր անձամբ: Ընդսմին, նա յիշատակում է նաեւ նոյնանուն ամրոցը եւ անգամ՝* Խաչինայ *վանքը:*

Արդ, Կոստանդին Ծիրանածին կայսրը (913 -959) Ժ դ. կէսին արդէն գիտէր Խաչէնի իշխանութեան որոշակի անկախութեան մասին: Իր «Արարողութիւնների մասին» Բ գրքի 48-րդ գլխում («Այլազգիներին ուղարկուող նամակների վերնագրերը») նա անդրադառնում է նաեւ Հայաստանին՝ դնելով նրա հատուածը Արաբական խալիփայութիւնից յետոյ եւ Իբերիայից ու Ալբանիայից առաջ: Մեծ Հայքի (իմա՛ Բագրատունեաց թագաւորութեան) ու

23 «Իսկ Բուխայի երթեալ ընբոնէ *զմեծ իշխանն Ատրներսեհ*, որ բնակեալ էր *յամրոցին Խաչենոյ* եւ զայլ եւս զհամազգիս նորա» (**Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** *Պատմութիւն Հայոց*, էջ 127-128; **Yovhannēs Drasxanakertcʿi**, *Histoire d'Arménie*, գլ. ԻԶ, էջ 190): Ծարունակութիւնը եւս կարեւոր է մեզ համար. «Եւ անտի չուեալ գնայ ի գաւառն Գարդմանայ, եւ պատնէշ եւ պաշարումն շուրջ զԳարդման բերդիւն եդեալ՝ ընբոնէ անտի եւ զիշխանն Գարդմանայ զԿտրիճն՝ ի կալանս կապանաց արկեալ: Եւ անտի եւս չուեալ յՈւտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում եւ Կոն անուանէին զնա. որ ի նախնւոյ իւրմէ Սեւկոյ՝ Սեւորդիք ազգքն անուանէին: Եւ ապա եւս իշխանն Աղուանից Եսայի ենենգապատիր լեալ առ ի նմանէ՝ ընբոնի ի ձեռն նորա հանդերձ համազգեօք իւրովք. ընդ նմին եւ այլ եւս տեարք եւ իշխանք աշխարհին Աղուանից կալեալ կապեցան ընդ ձեռամբ նորա *[յիշե՛լ Սահլին - Ա. Յ.]*»: Բերենք նաեւ Ասողիկի հատուածը. «Եւ յառաջ խաղացեալ կալաւ զամենայն իշխանս Հայոց. զիշխանն Արծրունեաց Աշոտ՝ զհայր Դերենկին, եւ զսպարապետն Հայոց Սմբատ՝ զհայր թագաւորին Աշոտոյ, եւ զիշխանն Սիւնեաց Վասակ, եւ զԿտրիճն՝ Գարդմանայ իշխան, եւ *զիշխանն Խաչենոյ Ատրներսեհ*, եւ զԵսայի՝ Աղուանից իշխան, եւ զիշխանն Սեւորդեաց զՍտեփանոս, որում Կոնն կոչէին» (**Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան** *Պատմութիւն Տիեզերական*, գիրք Գ, գլ. Բ, էջ 107):